I

1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ԿԱՐՄԻՐՆԵՐԻ» ԵՎ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ԶԻՆՈՒԺԻ ՄԱՍԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Փետրվարյան ապստամբությունը, անկասկած, ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի ամենախոշոր իրադարձություններից է: Հայհեղկոմի 2,5-ամսյա անհեռատես քաղաքականության արդյունքում ժողովրդի մի մեծ հատվածի ապստամբության հետևանքով տապալվեց խորհրդային իշխանությունը մայրաքաղաք Երևանում և Հայաստանի մի զգալի մասում: Սակայն ռուսական 11-րդ բանակի ռազմական միջամտության արդյունքում 43-օրյա ընդմիջումից հետո կրկին վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:

Այդ իրադարձությունների վերաբերյալ ստեղծվել է պատմահուշագրական, գիտական, վավերագիր և հսկայական այլ գրականություն: Քննության են առնվել ապստամբության հետ կապված տարաբնույթ հարցեր, տրվել քաղաքականացված, երբեմն կողմնակալ գնահատականներ: Խորհրդային, հետխորհրդային և Սփյուռքի պատմագիր, հուշագիր հեղինակների տեսակետները փետրվարյան իրադարձությունների պատճառների, բնույթի, շարժիչ ուժերի, մասնակիցների թվաքանակի վերաբերյալ հաճախ տարբեր են ու հակասական: Խորհրդահայ պատմագիր և հուշագիր հեղինակները ջանացել են հնարավորինս նվազեցված ցույց տալ ապստամբությանը մասնակից կամ այս ու այն կերպ հարած մարդկանց թվաքանակը, որպեսզի «հիմնավորեն» այդ իրադարձությունների «ավանտյուրա» (արկածախնդրություն) լինելու հանգամանքը:

Ստացվում է, որ նախընթաց տասնամյակներին փետրվարյան իրադարձությունների շուրջ ստեղծվել է հարուստ գրականություն, սակայն մինչ օրս չկան միասնական, համահավաք ու հիմնավոր տվյալներ թե՛ «կարմիրների» և թե՛ ապստամբների զինուժի, դրանց կազմի, ըստ դեպքերի և իրադարձությունների զարգացման դրանց թվաքանակի փոփոխման, ռազմաճակատներում զինուժերի դասավորության, տեղաշարժերի, մարտունակության և համանման այլ հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրության բարդություններից մեկն այն է, որ հատկապես դժվար է ցույց տալ զինյալ ապստամբների թվաքանակը: Գրականության մեջ հիմնականում մատնանշվում է նախկին հայդուկային ջոկատների զինուժը: Սակայն, թե որքան է եղել ապստամբությանը հարած շարքային բնակիչների, գյուղացիների մասնակցությունը, տվյալներ չկան, որովհետև պաշտոնապես որևէ հաշվարկ չի կատարվել, հնարավոր էլ չէր կատարելու, քանզի ապստամբների շարքերում շարունակաբար տեղի է ունեցել մի կողմից համալրում,

մյուս կողմից՝ հոսունություն ու դասալքություն: Նույն կերպ, ըստ փուլերի, ավելի մեծ չափերի դասալքություններ են տեղի ունեցել նաև Կարմիր բանակի շարքերում: Ընդ որում՝ մինչ օրս հստակ տարբերակում չի կատարվել հայկական և Հայաստանում տեղակայված ռուսական Կարմիր բանակների միջև: Բանն այն է, որ մարտական գործողությունների ժամանակ Հայաստանի Կարմիր բանակը՝ որպես կանոն, բավարար մարտունակություն չի ցուցաբերել և հաճախ, քիչ թե շատ դիմադրության հանդիպելով, անձնատուր է եղել կամ էլ՝ դասալքել:

Վերոնշյալ հարցադրումներին պատասխանելու համար ամենից առաջ հարկ է պարզել երկու կողմերի՝ Կարմիր բանակի և ապստամբների զինուժի հարաբերակցությունը ապստամբության նախօրյակին և ապա՝ ապստամբության ընթացքում:

Կարմիր բանակի վերաբերյալ հայտնի են հետևյալ տվյալները. Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 7-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունից ժառանգություն ստացած և նոր վերակազմավորված հայկական (ՀՍԽՀ) Կարմիր բանակի թվակազմը, զորատեսակը, զինվածությունը և տեղակայումը եղել է 14 000 ուտող (բերան), որից 7 000 սվին (հետևակ), 1000 թուր (հեծյալ), 40 հրանոթ, մոտ 100 գնդացիր, 2 զրահագնացք և 1 ինքնաթիռ[1]:

Բանակի հիմնական մասը տեղակայված է եղել Արագածի լանջերից մինչև Արաքս կայարան՝ ավելի քան 16 գումարտակ. նպատակը թուրքական հնարավոր վտանգին դիմակայումն էր: Զորքի մնացած մասը տեղակայված էր Դարալագյազ–Նոր Բայազետում՝ 4 գումարտակ, Ղամարլուում՝ 5 գումարտակ և 3 պահեստային գումարտակ՝ Երևան–Վաղարշապատում: Վերոնշյալ զինուժերից կազմվել էին երկու կամ երեք գումարտակներից բաղկացած 12 գունդ: Գոյություն ուներ նաև 1 հեծյալ գունդ: Առկա էր բավականաչափ զենք, զինամթերք ու հանդերձանք[2]:

Ռազմական պատմաբան Կ. Հարությունյանի հաշվումներով՝ Հայաստանի Կարմիր բանակում ծառայողների թիվը 1920 թ. դեկտեմբերի դրությամբ կազմել է շուրջ 15 հազար մարդ: Դրա մեջ է ներառված նաև 11-րդ Կարմիր բանակի զորախմբի հետ Հայաստան մտած Առանձին կամ Հատուկ Հայկական գունդը՝ բաղկացած ավելի քան 800 հոգուց[3]: Արդեն 1921 թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական Կարմիր բանակի կազմում հաշվում էին 6000 սվին, 853 թուր, 44 հրանոթ, 236 գնդացիր: Հանրապետության բանակը տրոհված էր երեք բրիգադների, որոնց հրամանատարներն էին

---

[1] Боевой путь 11-й Красной Армии (май 1920 – ноябрь 1921 гг.). Сб. док., ред. А. О. Арутюнян.– *«Բանբեր Հայաստանի արխիվների», 1978, -1, էջ 78:*

[2] *Նույն տեղում, էջ 78–79:*

[3] *Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայկական ազգային զորամիավորումները (1918–1945 թթ.), Երևան, 2002, էջ 84–86: 1920 թ. մայիսյան ապստամբության պարտությունից հետո, ամռան-աշնան ամիսներին Ադրբեջանի տարածքում ձևավորված Կարմիր բանակի Հայկական հատուկ գունդը, որպես Կարմիր բանակի մի զորախումբ (հրամանատար գնդապետ Արմենակ Բաղդասարյան և քաղղեկ՝ Ե. Չուբար), 11-րդ բանակի մի քանի գնդերի ուղեկցությամբ, նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան անցավ սահմանը և մասնակցեց Հայաստանի խորհրդայնացմանը: Հայաստանի խորհրդայնացումից հետո քաղաքական առումով այդ գունդը դարձավ Հայաստանի կարմիր բանակի միջուկը:*

համապատասխանաբար 1-ինինը՝ Ա. Միրիմանյանը, 2-րդինը՝ Ն. Երմոլենկոն և 3-րդինը՝ Պ. Շալանովը[4]:

Հայաստանի բանակի հրամանատարության 1921 թ. հունվարի օպերատիվ մի ամփոփագրի մոտավոր տվյալներով՝ հանրապետության զինված ուժերում մնացել էր նախկին զենքերի կեսից էլ պակաս, այն է՝ մոտ 20000 հրացան և տարբեր տիպի 200 գնդացիր[5]:

Փետրվարյան ապստամբության նախօրյակին Հայաստանի կարմիր բանակի թվաքանակի մասին կարելի է պատկերացում կազմել նաև նրա պարենամատակարարման (համբարակային) փետրվար ամսվա նախահաշվից, որով պահանջվում էր կերակրել 17563 մարդու: Իսկ փետրվարի 1-ի դրությամբ Հայաստանի բանակը հանդերձանքով ապահովելու համար ներկայացվել է 18 000 մարդու հաշվով պահանջագիր[6]: Իհարկե, այս թվաքանակի մեջ պետք է ներառել ոչ միայն զինվորականությանը և սպայակազմին, այլև բանակին սպասարկող ռազմատեխնիկական, բժշկասանիտարական, տրանսպորտային և օժանդակ այլ ծառայողներին, որոնք սովորաբար կազմում են տվյալ բանակի ընդհանուր համակազմի մեկ քառորդից մինչև մեկ երրորդը:

Բերված տվյալներից կարելի է հետևեցնել, որ փետրվար ամսվա առաջին կեսի դրությամբ Հայաստանի բանակի թվակազմը եղել է մոտ 14 հազար մարդ: Սակայն կան նաև տվյալներ, որ 1921 թ. փետրվար ամսվա սկզբի դրությամբ բանակի թվակազմը շուրջ կրկնակի պակաս է: Այսպես՝ Հայկական հատուկ գնդի նախկին հրամանատար գնդապետ Ա. Բաղդասարյանի հաղորդած տվյալներով 1921 թ. փետրվարի դրությամբ բանակի շարքերում կար 6300 սվին և 835 թուր[7]:

Ըստ պատմաբաններ Շ. Հարությունյանի և Ի. Թայիրյանի, Փետրվարյան ապստամբության նախօրյակին Հայաստանի բանակն իր կազմում ուներ 3 հրաձգային և 1 հեծյալ բրիգադա, մի քանի այլ հատուկ նշանակության ստորաբաժանումներ, 3 զրահագնացք՝ 6 հրանոթով, 4 գնդացրով և այլն[8]: 1-ին հրաձգային բրիգադան (հրամ. Ա. Միրիմանյան) տեղակայված էր Ղամարլուի շրջանում, 2-րդը՝ (հրամ. Ն. Երմոլենկո)՝ Վաղարշապատի շրջանում, 3-րդը՝ (հրամ. Տիմչենկո, հետո Պ. Շալանով)՝ Երևանում,

---

[4] *Նույն տեղում, էջ 86:*

[5] Г. А. Галоян. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900–1922. Ереван, 1969, с. 395.

[6] Боевой путь 11-й Красной Армии..., с. 87-88.

[7] *Ա. Բաղդասարյան. Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1931, էջ 12, 55: Գնդ. Ա. Բաղդասարյանն իր այս ռազմական հուշերում Կարմիր բանակի և ապստամբների զինուժի, մարտական գործողությունների վերաբերյալ առավել հավաստի տվյալներ է հաղորդում: Նմանապես վստահելի են ռազմական գործողություններին անմիջական մասնակից բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամյանի և Կարո Սասունիի հաղորդած թվական տվյալներն ու տեղեկությունները, որոնք նմանվում կամ գրեթե համընկնում են արխիվային նյութերի տվյալներին (տե՛ս Բաշգառնեցի Մ. Աբրահամյան. Իմ հիշելի հուշերը.– Հայ դատի մատենաշար, թիվ 7, Թեհրան, 1978, Կ. Սասունի. Փետրվարյան ապստամբությունը.– □Հայրենիք□ (Բոստոն), 1925, թիվ 12 (հոկտեմբեր), թիվ 1 (նոյեմբեր), թիվ 2 (դեկտեմբեր), 1926, թիվ 3 (հունվար)):*

[8] *Շ. Ռ. Հարությունյան. Հայ ժողովրդի պատմություն (1917–1968), հ. 4, Երևան, 1970, էջ 147,* И. Таирян. XI Красная Армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении. Ереван, 1971, с. 205.

4-րդ հեծյալ բրիգադան՝ Ելենովկա – Օրդաքլու և Նոր Բայազետ–Դարալագյազ հատվածներում: Այդ նշանակում է, որ ապստամբության նախօրյակին Հայաստանի բանակի զորամասերը ցրված են եղել հանրապետության տարբեր հատվածներում:

Ըստ Ի. Թայիրյանի, Հայաստանի բանակում հաշվում էր 6300 սվին և 900 թուր, 45 հրանոթ, 400 գնդացիր[9]: Բերված տվյալները, ըստ էության, նման են Ա. Բաղդասարյանի հաղորդած թվական ցուցանիշին: Իսկ արդեն փետրվարի կեսին՝ ապստամբության նախաշեմին, Ի. Թայիրյանը Հայաստանի բանակի թիվը նշում է 4000 սվին և 2 զրահագնացք[10]: Եթե 4000-ն ընդունենք ճիշտ թիվ, ապա ստացվում է, որ Հայաստանի բանակի 3200 զինվոր, այդ թվում՝ շուրջ 1000 հեծյալ, ռուսական 11-րդ Կարմիր բանակի զորամասերի հետ մեկնել են հայ-վրացական սահման՝ Լոռին ազատագրելու և Վրաստանը խորհրդայնացնելու: Որ Լոռիի ազատագրմանը և Վրաստանի խորհրդայնացմանը մասնակցություն են ունեցել նաև Հայաստանի բանակի առանձին զորամասեր, այդ մասին վկայում են ՀՍԽՀ ռազմական գործերի ժողկոմ Ալ. Մյասնիկյանը, Հայաստանի փրկության կոմիտեի (ՀՓԿ) նախագահ Ա. Վրացյանը և ուրիշներ[11]:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետության տարածքում բացի հայկական կարմիր բանակից տեղակայված էին նաև ռուսական 11-րդ կարմիր բանակի զորքեր: Կ. Պոլսում լույս տեսնող «Վերջին լուր» թերթը տեղեկացնում է, որ Ղազախ–Իջևանով Հայաստան մտած 11-րդ Կարմիր բանակի զինուժը հասնում էր 10 հազար զինվորի[12]: Կարծում ենք, որ 10 հազար թիվը չափազանցություն է: Հայաստան մուտք գործած ռուսական զորքի թիվը կազմել է մի քանի հազար զինվոր: Կ. Մասունիի տվյալներով՝ Երևան փոխադրված այդ բանակի թիվը հասնում էր մոտ 2000-ի[13]: Ականատեսները պատմում են, որ փետրվարի սկզբին Երևանում կային 3000-ի չափ ռուս զինվորներ և սպասվում էր նոր համալրում[14] (հոդվածագիրը, Երևան ասելով, հավանաբար, նկատի է ունեցել Խորհրդային Հայաստանը): 11-րդ կարմիր բանակի 20-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 60-րդ հրաձգային բրիգադի 178-րդ, 179-րդ և 180-րդ հրաձգային գնդերը գտնվել են համապատասխանաբար Շահթախտիում, Դիլիջանում, Նախիջևանում, 180-րդ գնդի մի գումարտակ՝ Քեշիշքենդում (Եղեգնաձոր)[15]:

Այժմ փորձենք ներկայացնել ապստամբների զինուժի պատկերն ապստամբության նախօրյակին և առաջին մի քանի օրերին:

Ամենից առաջ ապստամբների մարտական գլխավոր շարժիչ ուժը մեծամասամբ կազմել են արևմտահայ նախկին կամավոր աշխարհազորայինները՝

---

[9] И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 206:*

[10] *Նույն տեղում:*

[11] *Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն. Երկեր հինգ հատորով, հ. 5, Երևան, 2007, էջ 357, Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, Հ. Զ, Բեյրութ, 1967, էջ 49:*

[12] *«Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 28. XII. 1920:*

[13] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. նշվ. հոդվ.– «Հայրենիք», 1925, թիվ 12 (հոկտեմբեր), էջ 24:*

[14] *«Վերջին լուր» (Կ. Պոլիս), 8. II. 1921:*

[15] И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 210–211,* Боевой путь 11-й Красной Армии ..., с. 15; *նաև՝ Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 576:*

սասունցի, մշեցի, վանեցի, խնուսցի, բուլանըխցի և այլն: Հայտնի է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ այդ ուժերը գտնվում էին մարտական պատրաստականության վիճակում: Դրանք չկազմացրվեցին, որովհետև գոյություն ուներ թուրքական վտանգ և անհրաժեշտության դեպքում պետք է դիմակայեին թշնամուն[16]:

Տակավին 1920 թ. դեկտեմբերի 3-ի մի վավերագրից պարզվում է, որ Արագածի լանջին տեղակայված 1500-ի չափ սասունցի, մշեցի, խնուսցի և արևմտահայ կամավոր այլ զինվորներ կոլեկտիվ դիմում էին ուղղել ՀՍԽՀ բանակի հրամանատարությանը՝ ցանկություն հայտնելով հավատարիմ ծառայել խորհրդային երկրին[17]: Շուտով, սակայն, Հայհեղկոմի վարած քաղաքականությունն առաջ բերեց հիասթափություն խորհրդային իշխանության նկատմամբ, և արևմտահայ անկանոն զորամասերը դարձան ապստամբության հիմնական մարտական ուժը: Այս իմաստով իրավացի են պատմաբաններ Ա. Սիմոնյանը, Վ. Ղազախեցյանը և ուրիշներ, երբ նշում են, որ ապստամբների հիմնական մասը արևմտահայեր էին[18]: Իսկ Գ. Նժդեհի կարծիքով, թուրքահայ մարտիկներն ամենամարտունակն էին[19]:

Ըստ Մարտիրոս Աբրահամյանի հուշերի՝ ապստամբների զինուժը Կոտայքի հատվածում կազմել են՝ 595 հոգի հետևակ և 332՝ հեծյալ, իսկ Բաշգառնիի հատվածում՝ 600 հետևակ և 200 հեծյալ: Ստացվում է, որ հյուսիսից և հյուսիս–արևելքից Երևանի վրա արշավող ապստամբների զինուժը կազմել է հետևակ՝ 1195 հոգի և հեծյալ՝ 532, ընդամենը 1727 հետևակ ու հեծյալ[20]: Մարտիրոսի հայտնած այս տվյալները վստահություն են ներշնչում, որովհետև այդ զինուժի անմիջական հրամանատարը նախ եղել է ինքը և երկրորդ՝ բերված թվերը կլորացված չեն:

Կ. Հարությունյանի տվյալներով՝ ՀՓԿ զինուժը Երևանի գրավման ժամանակ ունեցել է 4300 սվին, 70 թուր և 20 հրանոթ[21]: Ըստ Ա. Սիմոնյանի՝ փետրվարի կեսերին հակախորհրդային ճակատն ունեցել է շուրջ 5000 զինված մարդ[22]: Ի. Թայիրյանի տվյալներով՝ «ավանտյուրայի սկզբում խռովարարները ունեցել են»՝ Բաշգառնի–Շորբուլաղ–Կիրպիչլուում՝ 1500 մաուզերիստ, Աշտարակի շրջանում՝ 1000, Ախտա–Ելենովկայում՝ 100, Նեջրլուում՝ 500, Երևանում՝ 2000, Դարալագյազում (Զանգեզուրից բերված)՝ 1500, ընդամենը՝ 6600 կռվող[23]: Հայաստանի արտակարգ հանձնաժողովի (չեկա) նախագահ Շ. Ամիրխանյանի հայտնած տվյալներով՝ փետրվարի 25 - ի դրությամբ խռովարարների զինուժի քանակը 6000

---

[16] *Ա. Ն ե ր ս ի ս յ ա ն. Կարո Սասունի, Երևան, 2004, էջ 239:*

[17] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 3, Կ. Ս ա ս ո ւ ն ի. նշվ. հոդվ.– «Հայրենիք», 1925, թիվ 1 (նոյեմբեր), էջ 82:*

[18] *Ա. Ս ի մ ո ն յ ա ն. Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, էջ 418, Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 54:*

[19] *Գ. Ն ժ դ ե հ. Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 367:*

[20] *Բ ա շ գ ա ռ ն ե ց ի Մ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 132:*

[21] *Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 103:*

[22] *Ա. Ս ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 415:*

[23] Й. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 211:*

սվին (հետևակ) և 1000 թուր (հեծյալ) էր[24]*: Շ. Հարությունյանի տվյալներով, որը նույնանում է Շ. Ամիրխանյանի տվյալներին, «դաշնակների զինվորների թիվը հասնում էր 7000-ի (6000 հետևակ և 1000 հեծյալ)»*[25]*: Եվ, վերջապես, Ա. Բաղդասարյանի հայտնած տվյալներով փետրվարի վերջերին ապստամբների բանակի թիվը կազմել է 6000 սվին և 1000 թուր, ընդամենը՝ 7000 զինյալ*[26]*: Բերված տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ Շ. Ամիրխանյանը և Շ. Հարությունյանն իրենց նշած տվյալները վերցրել են գնդ. Ա. Բաղդասարյանի հուշերից:*

Ապստամբների թվակազմի վերաբերյալ գոյություն ունեն նաև չստուգված ու չհաստատված տվյալներ: Այսպես, օրինակ, Հայաստանի կարմիր բանակի շտաբի օպերատիվ հետախուզական բաժանմունքից տեղեկացվում է, որ փետրվարի 17-ին սասունցիների 2000-ոց մի ջոկատ՝ մաուզերիստ Սեդրակի հրամանատարությամբ, Արագածից և Ապարանից շարժվում է Երևանի վրա[27]*: Հավանաբար, չստուգված այս տվյալը հիմք ընդունելով՝ Հայաստանի բանակի հրամանատար Մ. Մոլկոչանովը և զինկոմ Ի. Սվիրոդովը նույն օրը՝ փետրվարի 17-ին, իրենց վերադասին՝ 11-րդ բանակի հրամանատարությանը, հաղորդում էին, թե «Ալեքսանդրապոլի շրջանի չեզոք գոտում հանդես են եկել 2000-ի չափ թուրքահայ (որոշ փաստաթղթերում՝ «թուրքական»– Ա. Հ.) հեծյալներ խռովարարներին օգնելու համար»*[28]*: Հատկանշական է, որ Մոլկոչանովի այդ հաղորդագրությունը տասնամյակներ շարունակ խորհրդային պատմագրության համար հիմք է հանդիսացել Փետրվարյան ապստամբությունը կապելու դրսի ուժերի՝ տվյալ դեպքում Թուրքիայի հետ, իբրև նրանց կողմից կազմակերպվելու և ուղղորդվելու առումով:*

Արխիվային վավերագրերի, հուշագրությունների, փաստաթղթերի զանազան ժողովածուների նյութերն ու տվյալները համադրելով և ի մի բերելով՝ կարելի է գալ հետևյալ ամփոփ եզրահանգման: Ապստամբների ընդհանուր զինուժը ելույթի նախօրեին ու առաջին մի քանի օրերին՝ մինչև փետրվարի 25-ը, այսինքն՝ մինչև «կարմիրների» առաջին հարձակումը, ունեցել է մոտավորապես քանակական հետևյալ պատկերը.

Արագածի լանջերին՝ 1500 սասունցի, մոտկանցի, խութեցի, խնուսցի (հրամանատարներ՝ Սմբատ, Կ. Սասունի, Մուշեղ),

Երևանի և Էջմիածնի շրջանում՝ 1000 վասպուրականցի,

Կոտայքի և Բաշգառնիի շրջաններում՝ 1727 զինյալ (Մարտիրոս, Խնկո),

Եղեգնաձորում գտնվող Յապոնի 1500-ոց զորախումբը,

---

[24] Ш. М. А м и р х а н я н. Из истории борьбы за советскую власть в Армении. Ереван, 1967, с. 126–127.

[25] *Շ. Ռ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 151:*

[26] *Ա. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 54–55:*

[27] *ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 216, թ. 1:*

[28] *ՀԱԱ, ֆ. 195, ց. 3, գ. 735, թ. 124, ֆ. 1022, ց. 8, գ. 218, թ. 1, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 487,* Боевой путь 11-й Красной Армии..., с. 92.

Զանգիբասար–Ուլիխանլուի ուղղությամբ վանեցի Ասլանի 500-ոց ջոկատը,

Վ. և Ն. Նեջրլու գյուղերի տարածքում 100 զինյալ՝ խմբապետ Արամյանի ղեկավարությամբ,

Լոռու չեզոք գոտում և Ղարաքիլիսայում՝ 300 հոգի,

Նոր Բայազետում՝ խմբապետ Աղաբեկի 500 զինվորները,

Գաղտնի ջոկատ Երևանում՝ 1000, իսկ որոշ տվյալներով 2000 հոգի՝ քաղաքի պարետի օգնական Սարգսյանի հրամանատարությամբ,

Նորքում և Քանաքեռում՝ 500 ապստամբ,

Սուրմալվեցիների 400 հոգիանոց կամավորական ջոկատը,

Դալի Ղազոյի 300 զինյալ ջոկատը,

Ջահանգիր աղայի 200-ոց եզդիական հեծյալ ջոկատը,

Աշտարակի Փարպի գյուղի 60-հոգիանոց հեծյալ խումբը,

Հայ ռամկավարների 60-հոգիանոց խումբը[29]:

Այսպիսով՝ մեր ձեռքի տակ եղած տվյալների համադրումից պարզվում է, որ ապստամբության իրականացման փուլում և հաղթանակից հետո առաջին մի քանի օրերին ապստամբների ընդհանուր զինուժն անցել է 10 հազարի սահմանը՝ 10 647 զինյալ:

Հաշվի առնելով, որ ապստամբության հաղթանակից հետո 11-րդ Կարմիր բանակին դիմագրավելու նպատակով մարտ ամսի կեսերին ՀՓԿ լրացուցիչ զորահավաք է կազմակերպել[30], հակախորհրդային պայքարում հատկապես ակտիվորեն ներգրավվել են հայրենակցական միությունների խմբերը՝ տարոնցիների, սասունցիների, սուրմալվեցիների, ռամկավարների և այլն[31], խորհրդային վարչակարգից տուժած և դժգոհ շատերը, ապա բավարար հիմքեր կան պնդելու, որ ապստամբության վերելքի ու ոգևորության շրջանում զինյալ ապստամբների թիվը հասել է մինչև 15 հազարի:

Բազմաբնույթ փաստերը վկայում են, որ Երևանի գրավման ժամանակ ապստամբներն ունեցել են թե՛ մարտական և թե՛ բարոյահոգեբանական գերազանցություն: Հայկական բանակի հրամանատար Մ. Մոլկոչանովի՝ 11-րդ - բանակի Ռազմահեղափոխական խորհրդին (ՌՀԽ) ուղղած փետրվարի 19-ի հաղորդագրությունից պարզվում է, որ Երևանը գրավելու համար ապստամբները կենտրոնացրել են մեծ թվով ուժեր, ոտքի է ելել բնակչությունը:

---

[29] *ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 38, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 3, ֆ. 1022, ց. 8, գ. 215, թ. 1, գ. 216, թ. 1–2,* Боевой путь 11-й Красной Армии..., с. 92–93; *Կ. Ս ա ս ո ւ ն ի. նշվ. հոդվ.– «Հայրենիք», 1925, թիվ 1 (նոյեմբեր), էջ 80, 92–94, Ա. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 24–25, 54–55, Բ ա շ գ ա ռ ն ե ց ի Մ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39, 68 94, 124, 132, □Ազդակ□ (Բեյրութ), 2. IX. 1973, էջ 606, Ա. Վ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920–1921 թթ., Երևան, 1960, էջ 114, Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, էջ 79, Գ. Ն ժ դ ե հ. նշվ. աշխ., էջ 135–136:*

[30] *Իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, թե դաշնակցականները դիմել են բռնի զորահավաքի (տես՝ Շ. Ռ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 151): Եղել են, իհարկե, զորահավաքից հրաժարվող, բոլշևիկյան գաղափարներով տարված առանձին գյուղեր: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ զորակոչին արձագանքող կամավորներն այնքան շատ են եղել, որ եղած զենքն ու զինամթերքը չեն բավականացրել և կոչ է արվել ներկայանալ սեփական զենք-զինամթերքով:*

[31] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, էջ 88: Ա. Սիմոնյանը գրում է, որ բոլշևիկների դեմ պայքարի կոչին արձագանքեց շուրջ 3000 վասպուրականցի և կազմվեց Վասպուրականի զորագունդը՝ Ասլան Ստեփանյանի հրամանատարությամբ (տես՝ Ա. Ս ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 419):*

Նշվում է, որ փետրվարի 17-ին Քանաքեռի գրավման ժամանակ բանակի ջոկատների վրա կրակել են բոլոր տներից ու կտուրներից, որ կոմունիստների դեմ ոտքի են ելել Երևանի, Ղամարլուի, Քեշիշքենդի բնակչության զգալի մասը, իսկ զորքի մի շարք գնդեր ու վաշտեր, ի վիճակի չլինելով դիմադրել, գերի են հանձնվել[32]*:*

Խորհրդահայ պատմագրության մեջ տարածված է նաև այն պնդումը, որ Հայաստանի զինուժի անհավասարության (պակասի) պատճառով փետրվարի 18-ին թողնվեց Երևանը: Փաստերը ցույց են տալիս, որ Կարմիր բանակը և նրան օժանդակող ուժերը թվաքանակի պակաս չեն ունեցել, այլ պարզապես այդ բանակի շատ զորամասեր, դիմադրության հանդիպելով, չեն կռվել, գերի են հանձնվել կամ դասալքելով՝ անցել ապստամբների կողմը: Նրանք, հավանաբար, ճիշտ էլ վարվել են՝ թույլ չտալով եղբայրասպան, ավելորդ արյունահեղություն: Հիշեցնենք, որ ՀՍԽՀ կարմիր բանակն իր հիմնական կազմով ՀՀ նախկին բանակն էր և մտադիր չէր հանուն խորհրդային իշխանության պահպանման հավելյալ արյուն թափել:

Հայկական բանակը քաղաքական առումով հիմնականում վստահելի չի եղել խռովությունը ճնշելու համար: Այդ մասին է վկայում Հայհեղկոմի անդամներ Ի. Դովլաթյանի, Ա. Նուրիջանյանի և Չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանի փետրվարի 16-ին Բաքու՝ Գ. Օրջոնիկիձեին ուղղած հեռագիրը: Նրանում հայտնվում էր, որ հայկական զորամասերի վրա չեն կարող հենվել, ուստի խնդրում էին ապստամբությունը ճնշելու համար ռուսական զորամասեր ուղարկել[33]*: Գ. Օրջոնիկիձեին փետրվարի 17-ին նույնաբնույթ հեռագիր են ուղարկել նաև Մ. Մոլկոչանովը և Ի. Սվիրիդովը՝ խնդրելով Հայաստան մտցնել ռուսական զինվորական խոշոր միավորումներ*[34]*: Այդ օրերին Տավուշում գտնվող ՌՍՖԽՀ Չեկայի լիազոր Գ. Աթարբեկյանը հեռագրում է Կովկասի փաստացի ղեկավար Գ. Օրջոնիկիձեին, որ ապստամբների կողմն են անցել մի քանի զորամասեր*[35]*: Հայաստանում տեղեկացված 11-րդ Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովը նույնպես հաստատում է, որ «Հայկական բանակի մեծ մասն անցել է խռովարարների կողմը»*[36]*:*

Ապստամբների և «կարմիրների» զինուժի թվաքանակի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապստամբության առաջին փուլում վերջիններիս թվակազմը շարունակ անկման միտում է հանդես բերել: Հարց է ծագում, եթե 1921 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին, ինչպես արդեն ցույց է տրվել, Հայաստանի Կարմիր բանակի շարքերում հաշվում էր շուրջ մեկ և կես տասնյակ հազարի հասնող զինվոր ու սպա, ապա ի՞նչ պատահեց և ինչո՞ւ այդպես կտրուկ նվազեց նրանց թվաքանակը: Այդ հարցին, կարելի է ասել, պատասխանել է Հայաստանի բանակի

---

[32] Боевой путь 11-й Красной Армии..., с. 94–95.

[33] Российский государственный архив социально-политической истории (далее – РГАСПИ), ф. 85, с. 14, д. 60, с. 1.

[34] И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 217:*

[35] Геноцид армян (документы и комментарий), сост. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1. М., 2003, с. 386.

[36] *Կ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, էջ 66:*

հրամանատար Մ. Մոլկոչանովը 11-րդ բանակի ՌՀԽ-ին փետրվարի 19-ին ուղղված, արդեն հիշատակված հաղորդագրությամբ: Պարզվում է, որ Երևանի գրավման համար փետրվարի 16-ից 18-ն ընկած ռազմական գործողությունների ընթացքում «կարմիր» զինուժը գործնականում գտնվել է անմարտունակ, կիսակազմալուծված վիճակում, տեղի է ունեցել «կարմիր» զորամասերի զանգվածային անձնատվություն: Մ. Մոլկոչանովը հաղորդում է, որ ապստամբների հեծյալ զորքի կողմից էջմիածինը գրավելու ժամանակ Կարմիր բանակի 4-րդ գունդը գերի է ընկել ամբողջությամբ, փետրվարի 17-ի գիշերը Քանաքեռի գրավման ընթացքում ամբողջությամբ գերի է ընկել 1-ին գնդի երկու գումարտակ, փետրվարի 18-ի մարտերի ժամանակ հակառակորդը հարվածեց 5-րդ հրաձգային գնդի թիկունքին, որը պաշտպանում էր քաղաքը Զանգու գետի շրջանում Վաղարշապատի կողմից: Կարճատև կռվից հետո այս գունդը ևս գերի է ընկնում: Շարուր-Դարալագյազում գերի է հանձնվել և զինաթափ է արվել նաև 11-րդ կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի 180-րդ գնդի 1-ին գումարտակը և այլն[37]: Ռուսական այդ գումարտակի առնչությամբ «Ազատ Հայաստանը» տեղեկացնում է, որ փետրվարի 17-ին Յապոնը, Միսիանից մտնելով Դարալագյազ, կարողացել է գերեվարել 400 ռուս զինվոր՝ հրամանատարական կազմի հետ միասին[38]:

Հարկ է նշել, որ Հայաստանում խորհրդային իշխանությունը պահող հիմնական ուժը ռուսական կարմիր բանակն էր, որը, սակայն, ապստամբության ժամանակ իր հիմնական մասով գտնվում էր Վրաստանում:

Փետրվարյան ապստամբությանը վերաբերող գրականության մեջ տեղ է գտել այն պնդումը, որ փետրվարի 16–18-ին Երևանի գրավման ժամանակ քաղաքում, ըստ էության, ռուսական զորամասեր չեն եղել[39]: Բայց փաստերը ցույց են տալիս, որ դա այնքան էլ այդպես չէ:

Խմբապետ Մարտիրոսն իր հուշերում պատմում է, որ փետրվարի 16-ին գերի ընկած մի կոմունիստ վիրավոր սպայից կորզած տեղեկությամբ, ապստամբության նախօրյակին «կարմիրները» Քանաքեռում ունեցել են 2500 կռվող, մեկ վաշտ Ավանում, մեկ գումարտակ՝ Եղվարդում, մեկ հեծյալ 400 հոգիանոց ռուսական բրիգադա՝ Երևանում, մի քանի կայազորային հատուկ նշանակության, ռուսական և չեկայի գնդեր ու գումարտակներ[40]: Ըստ նրա՝ Երևանից Ղամարլու նահանջող բոլշևիկների զինական ուժերը կազմել են 3–4 հազար մարդ[41]: Քանաքեռում հայկական կարմիր բանակի գնդի վաշտերից մեկը ևս ռուսական էր[42]:

Հարկ է նշել, որ փետրվարյան իրադարձությունների ընթացքում՝ փետրվարի 18-ից մինչև «կարմիրների» հաղթանակի օրը՝ ապրիլի 2-ը,

---

[37] Боевой путь 11-й Красной Армии…, с. 94–95; *Ղամարլուի և Զանգեզուրի կռիվները (նյութերը հավաքեց Վ. Տամրուչի), Երևան, 1922, էջ 5–6, Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն. Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Երևան, 1948, էջ 66,* Ш. А м и р х а н я н. *Նշվ. աշխ., էջ 113–114, 116:*

[38] *«Ազատ Հայաստան» (Երևան), 9. III. 1921:*

[39] РГАСПИ, ф. 85, с. 14, д. 60, с. 1–2.

[40] *Բ ա շ գ ա ռ ն ե ց ի Մ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 126:*

[41] *Նույն տեղում, էջ 167:*

[42] Геноцид армян, с. 380.

Հայաստանի բանակի կողքին է եղել և հիմնական հարվածային ուժն է համարվել ռուսական 178-րդ գունդը: 11-րդ Կարմիր բանակի 20-րդ հրաձգային դիվիզիայի 178-րդ և 180-րդ գնդերը մինչ ապստամբության սկսվելը գտնվել են Շարուր–Դարալագյազում, իսկ այդ նույն դիվիզիայի 179-րդ գունդը Երևանի գրավման փուլում գտնվում էր Դիլիջանում[43]*: Հայտնի է, որ 11-րդ բանակի 20-րդ և 18-րդ դիվիզիաները Մ. Վելիկանովի հրամանատարությամբ իրենց հիմնական մասով կենտրոնացել էին հայ-վրացական սահմանին՝ Վրաստանը խորհրդայնացնելու նախօրոք մշակված պլանով: Կարմիր բանակի Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Վելիկանովի մարտի 27-ի մի հրամանից պարզվում է, որ ապստամբների կողմից Երևանի գրավման ժամանակ քաղաքի պաշտպանությանը մասնակից են եղել ոչ միայն 178-րդ, այլև 180-րդ ռուսական գնդերը, որոնք, սակայն, թվով լիակազմ չեն եղել*[44]*:*

Երևանի պաշտպանության նպատակով Մ. Մոլկոչանովը փետրվարի 16-ի երեկոյան հրաման է տալիս Շահթախտիի շրջանում գտնվող 178-րդ գնդին անհապաղ երկաթուղով ժամանել Երևան[45]*: Ռազմական գործերի ժողկոմ Ավիս Նուրիջանյանը փետրվարի 16-ին կամ 17-ին Գ. Օրջոնիկիձեի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ հայտնել է, որ «Շահթախտիից պահանջել է ռուսական մի քանի վաշտ, իսկ Չեզոք գոտուց հետ է կանչվել ռուսական մի վաշտ: Այսօր Հեկկերի հրամանով Մ. Մոլկոչանովը ռուսական վաշտերի և մարտկոցի հիման վրա ստեղծել է մի գունդ, որը ուղղվել է Քանաքեռ»*[46]*: Այդ գունդը, սակայն, «Ազատամարտ» զրահագնացքի հրամանատարի և մեքենավարի սաբոտաժի պատճառով Շարուրից բավականին ուշացումով (միայն փետրվարի 18-ի առավոտյան ժամը 9-ին) հասավ Երևան և անմիջապես մտավ մարտի մեջ: Բայց արդեն ուշ էր. քաղաքի ռազմավարական կարևոր կետերն արդեն ապստամբների ձեռքում էին: Ապստամբները, Զանգվի և Կոնդի կողմից պարտության մատնելով 5-րդ գունդը, ներթափանցել էին քաղաք: Ուստի, 178-րդ և 5-րդ ջախջախված գնդերը քաղաքի կոմունիստական ջոկատների, կուսակցական ու պետական մարմինների անձնակազմերի հետ նահանջում էին դեպի երկաթուղային կայարան: Ապստամբությանն ականատես Ա. Սևանի հայտնած տեղեկությամբ, փետրվարի 18-ին Երևանից նահանջող կարմիր զորքի թիվը հասնում էր 3000 հոգու, որի* «մեծամասնությունը ռուսներ էին» *(ընդգծ. մերն է –* Ա. Հ.*)*[47]*: Ռուսների՝ մեծամասնություն կազմելու վերաբերյալ հուշագրի տեղեկությունը մոտ է իրականությանը, եթե նկատի ունենանք, որ Երևանից նահանջող զորքի մեջ եղել է 400-հոգիանոց ռուսական*

---

[43] Боевой путь 11-й Красной Армии…, с. 15.

[44] *Նույն տեղում, էջ 127:*

[45] *Հիշեցնենք, որ 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի 178-րդ գունդը հայտնի էր նրանով, որ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայկական հատուկ գնդի հետևից Ղազախի տարածքից Իջևան մտած առաջին զորամասերից էր: Կարելի է ասել, որ այդ գունդը եղել է Հայաստանի խորհրդայնացման դրոշակակիրը: Ուշագրավ է նաև, որ այս գնդի վաշտն էր 1921 թ. հունվարի վերջերին (22–29-ը) ճնշել Մարտիրոսի գլխավորած Բաշգառնիի խռովությունը: Ռուսական այդ գունդը դիրքերում մնաց մինչև ապստամբության ճնշման ավարտը:*

[46] РГАСПИ, ф. 85, с. 14, д. 61, с. 2.

[47] *Ա. Ս ե ա ն. Փետրվարի 18-ի հեղափոխությունը.– «Վեմ» (Փարիզ), 1936, թիվ 1 (հունվար-փետրվար), էջ 96:*

բրիգադա, ինչպես նաև փաստորեն չկռված ռուսական 178-րդ գունդը՝ չհաշված նաև հատուկ նշանակության ռուսական առանձին ստորաբաժանումները:

Եվ այդ իմաստով դժվար է համաձայնել պատմաբան Վ. Ղազախեցյանի այն տեսակետին, թե Վրաստանի խորհրդայնացման հետ կապված «Հայաստանից դուրս էին բերվել 11-րդ բանակի (ռուսական) բոլոր զորամասերը»[48]: Այս կապակցությամբ խոսք կարող է լինել միայն այդ զորամասերի հիմնական մասը բայց ոչ բոլորը Հայաստանից դուրս բերելու մասին:

Ռուսական զորքի սակավությունը, անշուշտ, դյուրացրել է քաղաքի արագ և քիչ զոհերով գրավումը: Դա պայմանավորված է եղել նաև լավ մշակված ու նախապատրաստված պլանով: Կոտայքի Զառ գյուղի փետրվարի 12-ի գաղտնի ժողովում մշակված ծրագրով Երևանում ապստամբությունը սկսվելու էր փետրվարի 16-ի՝ լույս 17-ի գիշերը: Ռազմական գործողությունները սկսվելու էին գիշերվա ժամը 4-ին՝ դրսից և ներսից միաժամանակ: Ապստամբները քաղաք պետք է մտնեին չորս ուղղությամբ՝ խճուղով, Աստվածածնի փողոցով, Կոզեռնի մոտով և Թոխմախան գյուղի կողմից: Ծրագրված էր գրավել կարևորագույն հիմնարկները և օբյեկտները՝ Հեղկոմը, Չեկան, Կենտկոմը, բանտերը, ռադիոն, հեռախոսային կենտրոնը, գլխավոր շտաբը և այլն[49]:

Խորհրդահայ պատմագրության մեջ զարգացվել է մի տեսակետ, համաձայն որի ապստամբության կազմակերպիչները նպատակ են ունեցել մի քանի ուղղությամբ շարժվել Երևանի վրա, գրավել այն, թույլ չտալ Կարմիր զորքին ու կառավարությանը դուրս գալ քաղաքից, ջախջախել կամ գերի վերցնել նրանց: Այդ կապակցությամբ, օրինակ, դժվար է համաձայնել Ի. Թայիրյանի այն տեսակետին, թե գնդ. Թարխանյանը[50] նպատակ էր դրել արագընթաց կերպով բոլոր կողմերից շրջապատել և գրավել Երևանը՝ թույլ չտալով կարմիրներին (զորքին, կուսակցությանը, խորհրդային-պետական մարմիններին) հեռանալ քաղաքից[51]: Իսկ Շ. Ամիրխանյանը գրում է, թե Երևանի գրավման ընթացքում խռովարարներն ամեն կերպ ջանում էին հասնել իրենց հիմնական նպատակին՝ «շրջապատել Էրիվանը և ոչնչացնել մեր կենդանի ուժը Հեղկոմի հետ միասին»[52]:

Այնինչ փաստերը հակառակն են ապացուցում: Ապստամբները հատուկ նպատակ չեն ունեցել շրջապատել ու ջախջախել «կարմիրներին»՝ Հեղկոմի հետ: Գնդ. Ա. Բաղդասարյանը վկայում է, որ Ս. Թարխանյանը հրաման էր արձակել քաղաքն անմիջապես չգրավել, այլ հնարավորություն տալ «կարմիրներին» կանոնավոր հետ նահանջել և դուրս գալ շրջապատումից[53]: Ս. Վրացյանը, Մարտիրոսը և ուրիշներ վկայում են, որ Երևանի

---

[48] *Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 51:*

[49] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, էջ 22–23:*

[50] *Ի դեպ, իրականությանը չի համապատասխանում Ի. Թայիրյանի, Շ. Հարությունյանի և այլոց այն պնդումը, թե Թարխանյանը «թունդ դաշնակ էր» (տես՝* И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 229, Շ. Ռ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 143): Իրականում նա եղել է անկուսակցական:*

[51] И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 210:*

[52] Ш. М. А м и р х а н я н. *Նշվ. աշխ., էջ 121:*

[53] *Ա. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 42–43:*

գրավման պլանը հստակ ու դետալներով մշակված է եղել: Դրա համար էլ քաղաքը գրավվել է նվազագույն զոհերով: Հեղկոմի անդամ Ա. Մռավյանն էլ 1921 թ. մարտի 9-ի իր հայտնի նամակում խոստովանում է, որ դաշնակները «հիանալի էին կազմակերպել իրենց ելույթը»[54]: Պարզվում է, որ ապստամբական զինուժը քաղաք է մտել դանդաղ ընթացքով: Երևանի գրավման ժամանակ ապստամբների հրամանատար Կ. Թարխանյանի հրամանով երկաթուղային կայարանի ուղղությամբ բացված է եղել միջանցք (պատուհան)՝ քաղաքից հեռանալու համար: Մի քանի ժամով հետաձգվել է քաղաքի կենտրոնական մասի գրավումը, որպեսզի հնարավորություն տրվեն կարմիր զինուժին, Հեղկոմին, կուսակցական-պետական մարմիններին վագոնները բարձելու և դեպի Ղամարլու շարժվելու:

Ապստամբների այս վարքագծի վրա ազդել է մի քանի գործոն: Նախ, գոյություն է ունեցել հանդուրժողականության պահ բոլշևիկների հանդեպ: Հանդուրժողականության դրսևորում է եղել այն, որ թույլ են տրվել Հեղկոմին ու նրան հավատարիմ ուժերին նստեն գնացք և հեռանան: Այնինչ, եթե ապստամբները հատուկ մտադրություն ունենային, կարող էին նրանց լիովին ջախջախել: Այստեղ կար հայը հայի դեմ զենք չբարձրացնելու, չկռվելու հոգեբանական գործոնը: Նույնը կարելի է ասել նաև հայը ռուս զինվորի դեմ կռվելու հարցում: Անգամ սպարապետ Կուռոն առանձնապես տրամադիր չի եղել կռվելու ռուսական Կարմիր բանակի դեմ: Դա ակնհայտ երևաց հատկապես Վայոց ձորի հունիսվերջյան կռիվերի ժամանակ: Գ. Նժդեհը ցավով ու կշտամբանքով է խոսում Կուռոյի անգործության ու պարտվողականության մասին[55]: Ասենք, եթե ապստամբները ինչպիսի նվիրվածությամբ էլ կռվեին, միևնույնն է, վերջին հաշվով խորհրդային կարմիր բանակին չէին կարող հաղթել:

Որ ապստամբները «կարմիրներին» և Հեղկոմին լիակատար ոչնչացնելու նպատակ չեն ունեցել, երևում է նաև նրանից, որ քաղաքը գրավելուց հետո նրանք հարձակողական ակտիվ գործողություններ չեն ծավալել, ավելի հաճախ դիմել են ինքնապաշտպանության: Իսկ մենք մարքսիզմի դասականներից գիտեինք, որ ինքնապաշտպանությունը ապստամբությունների կամ հեղափոխությունների համար մահ է: Ընդհակառակը, ապստամբների պասիվ վիճակից օգտվելով, մի քանի օր անց՝ փետրվարի 24-ից սկսած, «կարմիրներն» են անցնում հարձակման և փետրվարի վերջին ընդհուպ հասնում Երևանի արվարձանները՝ նույնիսկ գրավում մերձակա Չարբախ և Նորագավիթ գյուղերը:

Ապստամբության թույլ կողմերից մեկն այն էր, որ նա, ըստ էության, չուներ կանոնավոր բանակ: Բաշգառնեցի Մարտիրոսը վկայում է, որ Երևանը գրավելուց հետո մարտիկների զգալի մասը վերադառնում է իրենց տները[56]: Կնշանակի՝ ապստամբների զինուժը չի եղել կանոնավոր ու պատշաճ կարգապահ: Բայց դրա փոխարեն կար ոգևորություն և նվիրում: Ապստամբների բանակը (զինուժը), ինչպես ասվել է, կազմված էր կամավորներից՝

---

[54] *Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբ. և կազմող Վ. Ղազախեցյան, Երևան, 1999, էջ 18:*

[55] *Գ. Ն ժ դ ե հ. նշվ. աշխ., էջ 406–408:*

[56] *Բ ա շ գ ա ռ ն ե ց ի Մ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 167:*

արևմտահայ նախկին հայդուկային խմբերից և կռվին անվարժ ժողովրդական աշխարհազորից: Եվրոպայում Հայաստանի ներկայացուցիչներին ուղղված համատեղ գրության մեջ Հ. Քաջազնունին և Ս. Վրացյանը հայտնում էին. «Այս կռվում մենք չունենք ո՛չ կանոնավոր զորք, ո՛չ հրամանատարական կազմ և ո՛չ ռազմատեխնիկական միջոցներ: Կռվողը ինքը զինված ժողովուրդն է»[57]: Ապստամբների բանակը չուներ բավարար թվով սպայակազմ, որովհետև Հայկական նախկին բանակի կադրային սպայությունն աքսորվել էր Ռուսաստան: Այդ իսկ պատճառով անգամ ռազմաճակատները ղեկավարում էին զինվորական կրթություն չունեցող խմբապետերը, օրինակ՝ Սմբատը, Մարտիրոսը և ուրիշներ:

Եթե ապստամբության ժամանակ և հաղթանակից հետո՝ առաջին փուլում, ուժերի գերակշռությունը և բարոյական առավելությունն ապստամբների կողմն էր, ապա երկրորդ փուլում՝ մարտի 2-րդ կեսում, ռուսական ուժերի մի քանի ուղղությամբ կենտրոնացումից և ճակատներում ռազմական գործողությունների ուժեղացումից հետո ուժերի հարաբերակցությունն ու ռազմական նախաձեռնությունը լիովին անցնում է Կարմիր բանակի կողմը:

Մարտի կեսերից ապստամբների ճամբարում տեղի է ունենում նաև մեկ այլ գործընթաց: Ապստամբության առաջին փուլում կամավոր գերի ընկած կամ ապստամբների կողմն անցած հայկական Կարմիր բանակի առանձին զորամասեր, որոնք, ի դեպ, քաղաքականապես վստահելի չէին, այժմ արդեն այս կամ այն գործողության ժամանակ, երբ նեղ վիճակում էին հայտնվում, ապա մեծ ու փոքր խմբերով լքում էին դիրքերը և անցնում «կարմիրների» կողմը կամ առանց կռվի անձնատուր լինում: Այս գործում, իհարկե, իր դերն էր խաղում նաև կոմունիստական քարոզչամեքենան: Խմբապետ Մարտիրոսի հաղորդմամբ ապստամբների զորամասերում գործել են նկատելի թվով ծպտված բոլշևիկներ, որոնք կատարում էին մատնություններ ու քայքայիչ աշխատանք[58]: Ապստամբների ճամբարը լքելու և «կարմիրների» կողմն անցնելու փաստեր են արձանագրվել Ախտայի, Նոր Բայազետի և Դարալագյազի ռազմական գործողությունների ժամանակ: Այսպես, օրինակ, ապրիլի 1-ին հայկական նախկին բանակի 4-րդ գնդի 3-րդ գումարտակը, այս անգամ էլ լքելով ապստամբների դիրքերը, անցնում է Կարմիր բանակի կողմը[59]:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ տվյալ քաղաքի կամ շրջանի բնակչությունն է թիկունքից հարվածել ապստամբների ուժերին: Այսպես, օրինակ, մարտի 15-ին Նոր Բայազետում մղված կռիվների ժամանակ քաղաքի և շրջանի բնակիչները թիկունքից հարվածում են ապստամբների, տվյալ դեպքում՝ նժդեհական զինուժին և դուրս քշում դեպի Ղարանլուղ (Մարտունի): Այդ մասին Նոր Բայազետի զորամասի հրամանատար փոխգնդապետ Բեկ-Զուրաբովը ցավով հետևյալն է հայտնում սպարապետ Նժդեհին. «Ձեր ենթադրությունը քյավառցիների մասին կատարելապես իրականա-

[57] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, էջ 87:*

[58] *Բ ա շ զ ա ռ ն ե ց ի Մ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 180–181:*

[59] Боевой путь 11-й Красной Армии…, с. 135.

ցավ: Դավաճանությունը քաղաքացիների կողմից էր, որոնք մեզ զրկեցին թիկունքից…»[60]:

Ակներև է, որ ռազմական գործողությունների ընթացքում թե՛ «կարմիրների» և թե՛ ապստամբների զինուժում թվակազմի փոփոխություններ են տեղի ունեցել: Սակայն դրանց շարժի մասին չկան համահավաք ամփոփ տվյալներ, եղածներում էլ երբեմն հանդիպում են թվային անհամապատասխանություններ: Բայց նկատվել է հետևյալ ընդհանուր միտումը. Կարմիր բանակի թվակազմը փոփոխություն է կրել առաջին փուլում՝ մինչև մարտի կեսերը՝ պակասելու, իսկ մարտի երկրորդ կեսին՝ 11-րդ Կարմիր բանակի շնորհիվ, կտրուկ աճելու միտումով, իսկ ապստամբներինը, եթե նկատի չունենանք անկանոն զորքին բնորոշ տարերային երևույթները, ապա այն թվական, քանակական տեսակետից կարելի է ասել, որ շարունակ համալրվել է:

Հիմք ընդունելով Ա. Բաղդասարյանի հայտնած տվյալները՝ հայ պատմագրության մեջ ընդունված է փետրվարի 18-ին Երևանից նահանջած զորքի թվաքանակը համարել 1664 հետևակ և 70 հեծյալ[61]: Երևանից Ղամարլու նահանջող կարմիրների զինուժն ավելի պակաս է ներկայացրել միայն Ս. Վրացյանը, այն էլ գիտակցաբար և որոշակի նկատառումով: Այսպես՝ ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանը Գ. Նժդեհին և Ռ. Տեր-Մինասյանին փետրվարի 20-ին ուղղած գրությունում տեղեկացնում է, որ դեպի Ղամարլուի կողմերը նահանջած «կարմիրների» զինուժը կազմում է մոտ 1000 հոգի, որի կեսից ավելին ռուս է[62]: Այստեղ Ս. Վրացյանը միտումնավոր նվազեցրել է Ղամարլու նահանջող «կարմիրների» զինական կարողությունը, որպեսզի Դարալագյազում հաստատված նժդեհականների մոտ անհանգստություն չառաջանա:

Կ. Սասունին հայտնում է, որ Ղամարլուի ճակատում «կարմիրների» զինուժը հաշվում էր 2,5-ից 3 հազար հոգի՝ կազմված ռուսական գնդերից, բոլշևիկյան գումարտակից, Շարուրի թուրքերի և հայկական 2-րդ ու 3-րդ գնդերի մնացորդներից[63]: Ըստ բաշգառնեցի Մարտիրոսի հայտնած տեղեկությունների՝ դեպի Ղամարլու նահանջող բոլշևիկների զինական ուժերը կազմել են 3,5-ից 4 հազար հոգի[64]: Ս. Վրացյանի հուշերի գրքում զետեղված Հ. Տերտերյանի հոդվածում նույնպես նշված է, որ փետրվարի 18-ին Հեղկոմի հետ քաղաքից հեռացել են «առնվազը 4 հազար զինված մարդ»[65]:

Մեր կարծիքով՝ ռազմական գործողությունների առաջին փուլում՝ ավելի ստույգ փետրվարի 25-ի դրությամբ, երբ «կարմիրները» սկսեցին հարձակումը Ղամարլուի ճակատում, որը, ի դեպ, տևել է մինչև մարտի

---

[60] *Գ. Ն ժ դ ե հ. նշվ. աշխ., էջ 140:*

[61] *Ա. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 12, Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 80, Ա. Վ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 117, Շ. Ռ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 151, Ա. Ս ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 417, Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 103 և ուրիշներ:*

[62] *Գ. Ն ժ դ ե հ. նշվ. աշխ., էջ 135:*

[63] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. նշվ. հոդվ.– «Հայրենիք», 1925, թիվ 2 (դեկտեմբեր), էջ 105:*

[64] *Բ ա շ գ ա ռ ն ե ց ի Մ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 167, 174–175:*

[65] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, էջ 296:*

1-ը, նրանց զինուժը կազմել է 3,5 հազար հոգի: Ղամարլուի ճակատում «կարմիրների» հիմնական ռազմուժը Հայկական 1-ին հրաձգային բրիգադն էր՝ Ալ. Միրիմանյանի հրամանատարությամբ (զինկոմիսար՝ Լ. Մխչյան): Պատմաբան Ա. Մնացականյանի մենագրության տվյալներով՝ բրիգադն ուներ երկու գունդ՝ 2-րդը՝ 600, իսկ 3-րդը՝ 1000 մարդ: Այստեղ էր նաև փետրվարի 18-ի նահանջից հետո Ղամարլուի ճակատում գործող ռուսական 178-րդ հրաձգային գունդը՝ 441 մարդ (Ի. Թայիրյանի ունեցած տվյալներով 482 սվին), ինչպես նաև դարձյալ ռուսական 180-րդ գունդը՝ 437 մարդ[66]: Ղամարլուի զորախմբի ռազմուժի մեջ մտնում էին երկու զրահագնացքները՝ իրենց հրետանային 4 մարտկոցներով ու հեծյալ էսկադրոնով: Բացի այդ, ճակատում կռվում էր Երևանի կոմունիստ ակտիվիստներից ստեղծված 300 հոգուց կազմված ջոկատը և այլն[67]: Ղամարլուի ճակատում Կարմիր զորքի ակտիվին պետք է դասել Նախիջևանի և Վեդիի 400 թուրքերից կազմված «Կարմիր տաբոր» կոչված պարտիզանական ջոկատը՝ «ժողովրդական հերոս» Աբաս-Ղուլի բեկ Շադլինսկու գլխավորությամբ[68]: Ջոկատը թիկունքից պաշտպանում էր «կարմիրներին» և հարվածում նժդեհականներին:

Բերված համահավաք տվյալները ցույց են տալիս, որ Ղամարլուի ճակատում փետրվարի վերջի հարձակման ժամանակ «կարմիրներն» ունեցել են ոչ թե 1664 սվին և 70 թուր, այլ առնվազը կրկնակի ավելի կռվող զինուժ: Սրա դիմաց, ըստ Ի. Թայիրյանի և Շ. Ամիրխանյանի հայտնած տվյալների՝ ապստամբները կենտրոնացրել են 4300 սվին, 700 թուր և 20 հրանոթ[69]: Ըստ պատմաբան Ա. Վարդապետյանի՝ Ղամարլուի ճակատում դաշնակները (ապստամբները) կենտրոնացրել էին մոտ 4500 հետևազոր, 70 հեծյալ, 20 թնդանոթ[70]: Իսկ Շ. Հարությունյանն էլ, հավանաբար, հիմնվելով գնդապետ Ա. Բաղդասարյանի հուշերի տվյալների վրա, գրում է, որ ապստամբները Ղամարլուի ճակատում կենտրոնացրել էին մոտ 6000 սվին, 1000 թուր և 28 հրանոթ[71]:

Խոսելով «կարմիրների» և ապստամբների զինուժի թվակազմի փոփոխությունների մասին՝ հարկ է նշել, որ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է եղել գերազանցապես Ղամարլուի ճակատը, նրա զինուժը, քանի որ այն գլխավոր ճակատն էր: Սակայն մյուս երկու՝ Ղազախ–Դիլիջան–Ելենովկայի և Ղարաքիլիսա–Համամլու–Բաշ Ապարանի ճակատները, կարծես, անուշադրության են մատնվել թե՛ զինուժի և թե՛ մարտական գործողությունների տեսակետից, էլ չենք խոսում Նոր Բայազետի

---

[66] *Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917–1921), Երևան, 1966, էջ 345,* Боевой путь 11-й Красной Армии…, с. 98; И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 234 և 237:*

[67] *Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 346:*

[68] *Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 2, Ծ. Պ. Ա ղ ա յ ա ն. Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, էջ 366, Ա. Վ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 98:*

[69] И. Т а и р я н. *Նշվ. աշխ., էջ 234,* Ш. М. А м и р х а н я н. *Նշվ. աշխ., էջ 143:*

[70] *Ա. Վ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 117:*

[71] *Շ. Ռ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 151:*

ուղղությամբ գործող օժանդակ նշանակության ենթաճակատի մասին:

Հայտնի է, որ ՀՓԿ-ի զինուժի դեմ կռիվները Ղամարլուի ճակատի կարմիր բանակի ուժերով չէր սահմանափակվում: Հայաստանի հյուսիսային շրջաններից ապստամբների դեմ, ի սկզբանե, երկթև ճակատ էր բացվել վերոնշյալ երկու ուղղությամբ: Կարելի է ասել, որ Երևանը գրավելուց հետո Ղամարլուի ճակատի բացմանը զուգընթաց ինքնաբերաբար բացվեցին նաև այդ երկու օժանդակ ճակատները: Ըստ Ա. Սևանի՝ Ելենովկայի ճակատը նախաձեռնեցին տվյալ շրջանի մոլոկանները և փախստական Կարմիր զորքի մնացորդներն ու կոմունիստները[72]: Հետագայում այս ճակատի դերը մեծացավ և մարտի վերջին դարձավ գլխավոր, որովհետև ապստամբներին այստեղից էր սպասվում գլխավոր վտանգը: Տակավին փետրվարի 18-ին Ղազախ–Դիլիջանի մարտական շրջանի պետ էր նշանակվել 11-րդ Կարմիր բանակի 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Ալեքսանդր Շիրմախերը: Այդ շրջանի մեջ մտնում էին 11-րդ բանակի 18-րդ և 20-րդ դիվիզիաները[73]:

Ի տարբերություն Ղամարլուի ճակատի՝ հյուսիսային այդ երկու ճակատների զինուժի վերաբերյալ տվյալները սուղ են: Այդուհանդերձ, բերենք որոշ տվյալներ:

Փետրվարի 26-ի դրությամբ Ելենովկայի ճակատում «կարմիրների» գունդը բաղկացած էր 800 սվինից[74]: Ա. Շիրմախերը հայտնում է, որ Ղամարլուի ճակատի (փետրվարի 25-ի) հարձակմանն աջակցելու համար Բաքվից հրաման է արձակված՝ վճռական գործողությունների անցնել նաև Ելենովկայի ճակատում: Մարտի սկզբի դրությամբ Դիլիջան–Ելենովկայի ճակատի զինուժը կոմունիստական կամավոր ջոկատների հետ միասին, կարծում ենք, կազմել է մինչև 1500 հետևակ և հեծյալ զորք:

Փետրվարի վերջի դրությամբ՝ Ելենովկայի ճակատում ապստամբներն ունեցել են՝ 1000 սվին, 200 թուր, 5 գնդացիր և 3 հրանոթ[75]: Նոր Բայազետի տեղամասում, որը օժանդակ, ենթաճակատի դեր էր կատարում Ելենովկայի ճակատի համար, այդ նույն ժամանակ ապստամբներն ունեցել են 300 սվին, 150 թուր և 8 գնդացիր[76]: Արդեն մարտի 13-ի դրությամբ՝ Ելենովկայի (Ն. Ախտա–Քարվանսարայ–Ռնդամալ) ճակատում ապստամբների զինուժը կազմել է 1300 հետևակ, 200 հեծյալ և 200 «մաուզերիստ, որից 100 հեծյալ Զանգեզուրից ժամանած Նժդեհի ջոկատից»[77]:

Ավելի սուղ են տվյալները Ղարաքիլիսա–Համամլու–Ապարան ճակատի զինուժի վերաբերյալ: Մարտի սկզբների դրությամբ ապստամբներն այս ճակատում ունեցել են 1000 սվին, 500 թուր, 16 գնդացիր և 5 հրանոթ[78]:

---

[72] *Ա. Սևան. նշվ. աշխ., էջ 96:*

[73] И. Таирян. *Նշվ. աշխ., էջ 234:*

[74] Боевой путь 11-й Красной Армии…, с. 98.

[75] И. Таирян. *Նշվ. աշխ., էջ 249,* Боевой путь 11-й Красной Армии…, с. 103, 108.

[76] И. Таирян. *Նշվ. աշխ., էջ 249,* Боевой путь 11-й Красной Армии…, с. 103, 108.

[77] Боевой путь 11-й Красной Армии…, с. 112.

[78] И. Таирян. *Նշվ. աշխ., էջ 249:*

Այստեղ նրանց զինուժին դիմակայում էր 11-րդ բանակի 20-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 179-րդ հրաձգային գունդը, իսկ Ելենովկայի ճակատում՝ 18-րդ հրաձգային դիվիզիայի 160-րդ գունդը[79]:

Հարկ է նշել, որ հյուսիսային այդ երկու ճակատներում էլ, բացի «կարմիր» կանոնավոր զորքից, գործել են նաև կոմունիստական և պարտիզանական առանձին կամավոր ջոկատներ: Այսպես, օրինակ, 11-րդ բանակի 179-րդ գնդի հրամանատարը փետրվարի 20-ին ուղիղ հեռախոսակապով 20-րդ դիվիզիայի շտաբի պետին հայտնում է, որ Ծաղկունք–Շահազիզ–Ելենովկա–Օրդաքլու գիծը պահելու համար իր տրամադրության տակ են անցել Նոր Բայազետից ժամանած կոմունիստների մի ջոկատ՝ 300 հետևակ և 50 հեծյալ, որոնք ներկայումս գտնվում են Օրդաքլուում (Լճաշեն): Ուժերի վերախմբավորումից հետո իրենք խնդիր են դրել հարձակվել Ախտայի (Հրազդանի) վրա[80]:

Նույն կերպ, երկաթուղային 47 բանվորից կազմված կոմունիստական «Երկաթյա ջոկատ» էր ստեղծվել Ղարաքիլիսայում, ջոկատ էին կազմակերպել նաև Բաքվի հայ բանվորները, իսկ Իջևանի շրջանի մի քանի գյուղերի ուժերով ձևավորվել էր կոմունիստական գումարտակ և այլն[81]:

Ի մի բերելով առկա տվյալներն ու տեղեկություններն այդ ճակատների զինուժերի վերաբերյալ՝ հիմքեր կան պնդելու, որ փետրվարի վերջին և մարտի սկզբների դրությամբ հակառակորդ կողմերը երկու ճակատներում ունեցել են մոտավորապես հավասար թվաքանակով զինուժ. Ելենովկայի ճակատում յուրաքանչյուրը 1500-ից 2000 կռվող, իսկ Համամլու-Ապարանինը՝ մինչև 1500: Հավանաբար, ուժերի այդ մոտավոր հավասարակշռությունն էր պատճառը, որ մինչև մարտի երկրորդ կեսը այդ ճակատներում ռազմական առումով էական փոփոխություններ չեն կատարվել:

Իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ Վրաստանի վերջնական խորհրդայնացումից հետո Անդրկովկասի կոմունիստ ղեկավարությունը և 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը լրացուցիչ ուժեր են կենտրոնացնում Հայաստանի հյուսիսային ճակատներում՝ փետրվարյան «խռովությունը» վերջնականորեն ճնշելու համար:

11-րդ բանակի հրամանատար Ա. Հեկկերը դեռևս մարտի 9-ի հրամանով հանձնարարում է Ղազախ–Դիլիջանի մարտական շրջանի պետ Ա. Շիրմախերին շարունակել հարձակումը Երևանի վրա՝ «ոչնչացնել հայ ապստամբական բանդաները և միանալ հայկական կարմիր բանակին Ղամարլուում»[82]: Ա. Շիրմախերի մարտի 24-ի Մ. Վելիկանովին հաղորդած տվյալներով՝ Ելենովկայի ճակատում ապստամբների զինուժը հասնում է մինչև 2000-ի, որը, ըստ նրա, ցույց է տալիս համառ դիմադրություն[83]:

---

[79] *Նույն տեղում, էջ 260:*

[80] Боевой путь 11-й Красной Армии…, с. 96–97.

[81] *Վ. Ն. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 66:*

[82] Директивы командования фронтов Красной Армии… (1917–1922 гг.). Сб. док., т. 3. М., 1974, с. 383.

[83] Боевой путь 11-й Красной Армии…, с. 124.

Կովկասյան ռազմաճակատի Ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն մարտի 21-ին նույն ճակատի հրամանատար Գիտտիսից պահանջում է Հայաստան փոխադրել երկու դիվիզիա: Մարտի 24-ին ստեղծվում է Երևանյան զորախումբը՝ կազմված 20-րդ և 18-րդ հրաձգային դիվիզիաներից՝ Մ. Վելիկանովի հրամանատարությամբ: Հարձակողական գործողություններն ընթանալու էին երկու ուղղությամբ՝ Դիլիջան–Ելենովկա–Ախտա և Համամլու–Բաշ Ապարան–Աշտարակ: Վճռական մարտական գործողությունը սկսվեց մարտի 28-ին և ավարտվեց ապրիլի 2-ին՝ Երևանի գրավումով[84]:

Երևանի գրավման գործողության ընթացքում Կարմիր բանակի թվաքանակի վերաբերյալ վավերագիր նյութերում, պատմագիտական և հուշագրական գրականության մեջ որոշակի տվյալներ չկան:

Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Վելիկանովը մարտի 27-ի հրամաններից մեկում տեղեկացնում է, որ իրեն հատկացված 11-րդ բանակի 20-րդ և 18-րդ հրաձգային դիվիզիաները, տեղական զորամասերի հետ միասին, պետք է կարճ ժամկետում ճնշել հակահեղափոխական ապստամբությունը, գրավել Երևանը և վերականգնել խորհրդային իշխանությունը Հայաստանում:

Երևանի գրավման համար գրոհի են նետվել 58-րդ և 54-րդ հրաձգային բրիգադները, որոնք, ի դեպ, աչքի էին ընկել Թիֆլիսի գրավման ժամանակ[85]: Զախ թևում (Ելենովկայի ճակատ) գործել է 18-րդ հրաձգային դիվիզիան՝ Ա. Շիրմախերի հրամանատարությամբ, որի մեջ մտնում էր 54-րդ բրիգադան՝ 160-րդ, 161-րդ և 162-րդ գնդերով, 18-րդ դիվիզիայի հեծյալ գունդը, 176-րդ հրաձգային գունդը, 20-րդ դիվիզիայի հեծյալ գունդը, Դիլիջանի կարաբինային գումարտակը, Քարվանսարայի կոմունիստական գումարտակը, Բաքվի բանվորական վաշտը, Ռնդամալի ջոկատը և այլն[86]: Այս թևի պահեստային խմբի մեջ մտնում էին 172-րդ գունդը, 20-րդ ուսումնական գումարտակը՝ կենտրոնացված Ելենովկայում, 58-րդ հրանոթային դիվիզիոնը և այլն[87]:

20-րդ հրաձգային դիվիզիան հիմնականում գործել է աջ թևում՝ Փամբակ–Բաշ Ապարան–Աշտարակ ուղղությամբ: Այդ թևում ակտիվ ռազմական գործողությունների մեջ ներգրավված են եղել 60-րդ և 58-րդ հրաձգային բրիգադները՝ առաջադրանք ունենալով մինչև ապրիլի 1-ը գրավել Երևանը: Ցավոք, չկան տվյալներ կարմիր բանակի 18-րդ և 20-րդ դիվիզիաների թվակազմի վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե յուրաքանչյուր դիվիզիայի զինյալ անձնակազմը հաշվենք 5-ից 6 հազար զինծառայող (հարկ է նշել, որ զորամիավորումները, որպես կանոն, եղել են ոչ լիակազմ), ապա Մ. Վելիկանովի գլխավորած Երևանյան զորախումբը կազմել 10-ից 12 հազար զինվոր՝ չհաշված երեք ճակատներում մինչ այդ գործող հայկական կարմիր բանակի զինուժը: ՀՍԽՀ զորամասի ամփոփագրերի հիման վրա Ա. Մնացականյանի կազմած համահավաք տվյալներով մարտի

---

[84] *ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 273, թ. 2,* Боевой путь 11-й Красной Армии…, с. 15, 122.

[85] Боевой путь 11-й Красной Армии…, с. 127.

[86] *Նույն տեղում, էջ 128:*

[87] *Նույն տեղում, էջ 129:*

31-ի դրությամբ Ղամարլուի ճակատում պաշարման մեջ գտնվող զորքի և հիմնարկների աշխատողների թվակազմը եղել է 4825 զինվոր ու 2058 մարդ հիմնարկների աշխատող և այլ մարդիկ՝ ընդամենը 6883 ուտող: Միաժամանակ նշվում են 882 ձի, 3145 հրացան, 83 գնդացիր, 14 հրանոթ[88]: Մեր կարծիքով, Երևանի գրավման փուլում բոլոր երեք ճակատներում Կարմիր բանակի ընդհանուր թիվը հասել է 16-ից 18 հազարի: Այդ նշանակում է, որ ստեղծվել էր ուժերի խիստ անհամաչափություն: Էլ չենք խոսում ապստամբների շարքերում տիրող հուսալքության, կռվելու փորձի, զենք-զինամթերքի պակասի և այլնի մասին:

Ապրիլի 2-ի կեսօրին առաջինը Երևան են մտնում Ա. Շիրմախերի գլխավորած 18-րդ հրաձգային դիվիզիան Քանաքեռի, իսկ 20-րդը՝ Աշտարակի կողմից: Արխիվային վավերագրերում նշվում է, որ 20-րդ դիվիզիայից առանձնապես աչքի են ընկել 1-ին հեծյալ և «փառապանծ» 174-րդ գնդերը[89]:

«Կարմիրները» և Հայհեղկոմը Ղամարլուի ճակատից Երևան են մտել ապրիլի 4-ին: Իրադարձությունների ականատես Ա. Ալպոյաճյանը վկայում է, որ ապրիլի 2-ին Երևանը հանձնվել է առանց կռվի[90]:

Հավելենք, որ Երևանյան զորախմբի մարտական գործողությունը Երևանի գրավումով չի սահմանափակվել: Մ. Վելիկանովը 58-րդ և 60-րդ հրաձգային բրիգադներին առաջադրանք էր տվել գրավել Բաշգառնին՝ կտրելով հակառակորդի նահանջի ուղին դեպի Զանգեզուր[91]: Սակայն Բաշգառնիի գրավման գործողությունը չի հաջողվում: Դրանից հետո էլ նահանջող ապստամբների 10 հազարանոց զանգվածի հետապնդումը շարունակվում է մինչև Եղեգնաձոր: Մ. Վելիկանովը ապրիլի 11-ի հրամանով հանձնարարում է Հայկական 1-ին հրաձգային բրիգադի հրամանատար Ա. Միրիմանյանին և ռուսական 180-րդ հրաձգային գնդի հրամանատարին ապրիլի 12-ին հարձակում գործել և գրավելով Քեշիշքենդը կտրել նահանջող ապստամբների ճանապարհը դեպի Զանգեզուր: Գործողությանը պետք է մասնակցեին Վեդիի «Կարմիր տաբոր» ջոկատը, որը գտնվում էր Տանձիկում[92]: Սակայն այս պլանը ևս ձախողվում է: Այսինքն՝ այնպես չէ, որ ապստամբների նկատմամբ հետապնդում չի եղել, ինչպես որ լռության է մատնվել հայ պատմագրության մեջ: Այն, ըստ էության, շարունակվել է ընդհուպ մինչև Մեղրի՝ մինչև Արաքսի գետանցումը[93]:

Այսպիսով՝ փետրվարյան իրադարձությունների գիտական ու անաչառ ուսումնասիրության տեսակետից կարևորվում է իրար դիմակայող երկու ուժերի՝ ապստամբների ու «կարմիր» զինուժի թվաքանակի, կազմի, մարտունակության և այլ հարցերի լուսաբանումը, հարցեր, որոնք հաճախ

---

[88] *Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 306–307:*

[89] Р. Г р и г о р я н, О. Б а л и к я н. Документы об установлении и упрочении советской власти в Армении.– *«Բանբեր Հայաստանի արխիվների», 1961, թիվ 1, էջ 87,* Боевой путь 11-й Красной Армии…, с. 137–138.

[90] *Թ ե ո դ ի կ. Ամենույն տարեցույցը, ԺԶ տարի (1922), Կ. Պոլիս, 1922, էջ 254:*

[91] Боевой путь 11-й Красной Армии…, с. 132.

[92] *Նույն տեղում, էջ 141–142:*

[93] *Նույն տեղում, էջ 160 և 163:*

հայ պատմագրության մեջ ներկայացվել են քաղաքականացված ու կողմնակալ դիրքից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խորհրդային Հայաստանի կարմիր բանակի զգալի մասը ապստամբության ժամանակ, ըստ էության, դասալքել է ու գտնվել կազմալուծված վիճակում: Խորհրդային կարգերին հավատարմություն են ցուցաբերել գերազանցապես ռուսական գնդերը և կոմունիստական կամավոր ջոկատները: Դրա փոխարեն մեծ ակտիվություն ու եռանդ է ցուցաբերել ապստամբների գործնականում ոչ կանոնավոր աշխարհազորային բանակը, որի թիվը մեր հավաքած տվյալներով անցնում էր 10 հազարը: Սակայն ապստամբության վերջին փուլում դրսի՝ ռուսական 11-րդ Կարմիր բանակի միջամտության հետևանքով, ի վերջո, կոտրվում է ապստամբների դիմադրությունը և կրկին վերահաստատվում խորհրդային իշխանություն:

О ВОЕННЫХ СИЛАХ ВОССТАВШИХ И «КРАСНЫХ» В ФЕВРАЛЬСКИХ СОБЫТИЯХ 1921 Г. В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

АРАРАТ АКОПЯН

Резюме

С точки зрения научного и обьективного изучения февральских событий 1921 г. в Армении большое значение придается двум противостоящим силам– восставшим и Красной Армии – по количеству военной силы, составу, боеспособности и т. д. Освещение этих вопросов в армянской историографии часто было политизировано и необъективно. Исследование показывает, что значительная часть Красной Армии Советской Армении по существу во время восстания дезертировала и находилась в разложившемся состоянии. Преданность советской власти проявили преимущественно русские полки и коммунистические отряды добровольцев. Большую активность и усердие проявили практически неорганизованные ополчения мятежников и по нашим собранным данным их численность превышала 10 000 человек. Однако на последней фазе восстания вследствие вмешательства русской 11-й Красной Армии было сломлено сопротивление мятежников и снова была восстановлена советская власть.

ON MILITARY FORCES OF INSURGENTS AND “THE REDS” DURING THE FEBRUARY EVENTS OF 1921 IN ARMENIAN HISTORIOGRAPHY

ARARAT HAKOBYAN

S u m m a r y

According to scientific and objective study of the February events of 1921 great attention is paid to two resistant forces – insurgents and the Red Army – according to the quantity of the military forces, staff, fighting efficiency and other questions in the interpretation of which in the Armenian historiography they were often presented as political and not objective. The research shows that in fact the greatest part of the Red Army of Soviet Armenia during the rising deserted and was in decomposite situation. Mainly the Russian regiments and the communist detachments of volunteers showed devotion to the Soviet power. Great activity and diligence showed practically not organized emergency volunteer corps of mutineers and according to the facts which we have collected their number was more than 10000 people. However, during the last phase of the rising owing to the interference of the Russian 11th Red Army, the resistance of the mutineers was broken and again the Soviet power was reinstated.